ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/37483-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-052-28.09.2021-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1211 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-052-28.09.2021-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է իր դիտողություններն ու առաջարկությունները:

1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը, իսկ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը՝ նախագծի վերնագրում և նախագծի 1-ին հոդվածում «Հաշվեքննիչ պալատի մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել:

2. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված «16-րդ կետով» բառերն առաջարկում ենք փոխարինել «16-րդ կետ» բառերով:

3. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված «17-րդ կետով» բառերն առաջարկում ենք փոխարինել «17-րդ կետ» բառերով:

4. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ արդյունքում նախատեսելով, որ Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով:

Տվյալ պարագայում հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված կարգավորման պահանջները՝ համաձայն որոնց՝ հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը, և միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենքի 6-րդ հոդվածի վերնագիրը վերաբերում է միջազգային համագործակցությանը, մինչդեռ, նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը վերաբերում է ուղեցույցների, մեթոդաբանության մշակմանը՝ հարկ ենք համարում նշել, որ նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր կարգավորման բովանդակությունը և օրենքի 6-րդ հոդվածի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել միմյանց:

5. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ արդյունքում նախատեսելով, որ

Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքներով:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ նախագծի 3-րդ հոդվածով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածում միայն թվարկված են սկզբունք-ները, իսկ վերջիններիս բովանդակությունը բացահայտված չէ: Մասնավորապես, օրինակ, նախագծի 3-րդ հոդվածով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածում, ի թիվս այլ սկզբունքների, նշվում է նաև գաղտնիության սկզբունքի մասին, մինչդեռ ներկայացված նախագծով ամրագրված կարգավորումների բովանդակությունից պարզ չէ, թե Հաշվեքննիչ պալատի լիազորությունների իրականացման ընթացքում գաղտնիության սկզբունքի պահանջը ինչպես, որ դեպքերում պետք է պահպանվի, իրագործվի՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ օրենքի 14-րդ հոդվածում ամրագրված կարգավորման համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի գործունեության հիմքում դրված սկզբունքներից են նաև հրապարակայնության և թափանցիկության սկզբունքները:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ մի շարք հոդվածներով առավել ամբողջական ներառվում են նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ առաջարկվող 9-րդ հոդվածի դրույթները:

Ուստի ելնելով վերոգրյալից՝ նախագծով անհրաժեշտ է բացահայտել նախագծի 3-րդ հոդվածով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքների բովանդակությունը: Հիշյալ առաջարկությունը բխում է նաև իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, արձանագրել է, որ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի (ՍԴՈ-1270): Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 9-ի ՍԴՈ-1213 որոշմամբ հայտնել է, որ իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (ՍԴՈ-1475):

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՍԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՍԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ

շփոթության (ՍԴՈ-1176, ՍԴՈ-1449):

6. Նախագծի 4-րդ հոդվածում, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի պահանջները, «հոդվածի գործողությունը դադարեցնել» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածն ուժը կորցրած ճանաչել» բառերով:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև նախագծի 6-րդ հոդվածում ամրագրված կարգավորմանը:

Բացի դրանից, հարկ ենք համարում նշել նաև, որ նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել օրենքի 10-րդ հոդվածը, որը վերաբերում է մասնագիտական կարողությունների ապահովման և շարունակական զարգացման սկզբունքին, համաձայն որի՝ Հաշվեքննիչ պալատը սահմանում է չափորոշիչներ հաշվեքննիչ պալատի աշխատակազմում աշխատանքի ընդունվողների համար, ինչպես նաև հաստատում է հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագիրը:

Անդրադառնալով նախագծին կից ներկայացված հիմնավորմանը՝ հարկ ենք համարում նշել, որ ներկայացված հիմնավորումների բովանդակային վերլուծությունից պարզ չէ օրենքի 10-րդ հոդվածում ամրագրված իրավակարգավորումն ուժը կորցրած ճանաչելու նպատակահարմարությունը և իրավաչափությունը: Մասնավորապես, նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ միայն նշվել է, որ նախագծի 2-4-րդ և 6-րդ հոդվածներում առաջարկվող կարգավորումները խմբագրական բնույթի են կամ իրականացվում են անհարկի կրկնություններից խուսափելու համար, մինչդեռ, հարկ է նկատել, որ նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը բովանդակային փոփոխություն է նախատեսում, և տվյալ դեպքում պարզ չէ, թե առաջարկվող կարգավորումն ինչ անհարկի կրկնություններից խուսափելու նպատակ է հետապնդում:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ հարկ ենք համարում նշել, որ նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

7. Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը «եզրակացությունները,» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները» բառերով՝ արդյունքում նախատեսելով, որ Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև նույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները համապատասխանաբար այդ ժամանակահատվածների ավարտման օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում է Ազգային ժողով:

Հարկ է նշել, որ նախագծով չեն սահմանվում պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացության կառուցվածքին ուղղված պահանջներ, իսկ սահմանված միակ կարգավորման, այն է՝ 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համապատասխանության առնչությամբ հարկ է նշել, որ այս պահանջին բավարարում են նաև պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները: Ուստի, նախագծի կարգավորումները թույլ չեն տալիս հստակ տարանջատել նշված եզրակացությունն արդեն իսկ առկա ընթացիկ եզրակացություն-

ներից՝ հաշվի առնելով նաև, որ գործնականում ծագած խնդիրը մանրամասն ներկայացված չէ նաև նախագծի հիմնավորմամբ:

Միաժամանակ, հարկ է նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողով է ներկայացնում՝

1) տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ.

2) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը.

3) օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ կանոնակարգ) 2-րդ հոդվածում ամրագրված կարգավորման համաձայն՝ Ազգային ժողովն իր լիազորությունները և գործառույթներն իրականացնելիս գործում է նույն օրենքին համապատասխան՝ նստաշրջանների, նիստերի, ինչպես նաև իր մարմինների աշխատանքի միջոցով:

Կանոնակարգի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացություններն Ազգային ժողով են ներկայացվում օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում:

Կանոնակարգի 116-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունն Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունն Ազգային ժողով ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Օրենքի՝ Հաշվեքննիչ պալատի լիազորությունները սահմանող 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատը՝ Ազգային ժողով է ներկայացնում՝ տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ, եզրակացություն պետական բյուջեի կատարման վերաբերյալ, նույն օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ (...):

Վերոգրյալ իրավակարգավորումների բովանդակությունից պարզ է դառնում, որ Հաշվեքննիչ պալատը Ազգային ժողով ներկայացնում է եզրակացություն պետական բյուջեի կատարման վերաբերյալ, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ: Ընդ որում, տվյալ պարագայում հարկ է նաև նկատի ունենալ, որ կանոնակարգի 115-րդ, 116-րդ և օրենքի 26-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսված են պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ինչպես նաև պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները Ազգային ժողով ներկայացնելու ժամկետներն ու կարգը:

Տվյալ դեպքում նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է նախատեսել, որ Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները համապատասխանաբար այդ ժամանակահատվածների ավարտման օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, պետք է ներկայացնի Ազգային ժողով, մինչդեռ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, կանոնակարգում և օրենքի 5-րդ հոդվածում Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացու-

թյուններ ներկայացնելու վերաբերյալ կարգավորումներ առկա չեն:

Բացի դրանից, տվյալ պարագայում հարկ է նաև նկատի ունենալ, որ օրենքի 26-րդ հոդվածը վերաբերում է ընթացիկ եզրակացություններին, մինչդեռ նախագծով առաջարկվող կարգավորումը վերաբերում է պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացություններին:

8. Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել:

Այս կապակցությամբ նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նշվում է, որ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և 39-րդ հոդվածի 1-ին մասը կրկնվում են, ուստի անհարկի կրկնությունից խուսափելու համար առաջարկվում է 31-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել:

Մինչդեռ հարկ է նկատել, որ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվեքննության իրականացման համար հաշվեքննիչ պալատը կարող է օգտագործել հաշվեքննվող օբյեկտի ներքին աուդիտի արդյունքները: Այդ նպատակով հաշվեքննիչ պալատն ուսումնասիրում է հաշվեքննվող օբյեկտի ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը և ներկայացնում առաջարկություններ դրա բարելավման համար:

Վերոնշյալ դրույթի բովանդակության մեկնաբանությունից պարզ է դառնում, որ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումը կրում է դիսպոզիտիվ բնույթ: Այսինքն՝ վերջինս հաշվեքննողին հնարավորություն է տալիս սեփական կամքով հաշվեքննության իրականացմամբ օգտագործել հաշվեքննվող օբյեկտի ներքին աուդիտի արդյունքները կամ ոչ: Ի հակառակ նշված կարգավորման՝ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը կրում է իմպերատիվ բնույթ, որին համապատասխան հաշվեքննության իրականացմամբ հաշվեքննիչ պալատն ուղղակի պարտավորություն է կրում ուսումնասիրել հաշվեքննության օբյեկտի ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկել օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի փոխարեն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչելու հարցը:

9. Նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքացիական ծառայողների» բառերը փոխարինել «հաշվեքննողների» բառերով՝ սահմանելով, որ Հաշվեքննիչ պալատի հաշվեքննողների՝ հաշվեքննությանը վերաբերող օրինական պահանջները պարտադիր են հաշվեքննության օբյեկտի ղեկավար և այլ պաշտոնատար անձանց համար:

Նախագծի հիմնավորմամբ նշվում է, որ սույն փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվեքննությանը քաղաքացիական ծառայողների հետ համատեղ կարող են մասնակցել նաև քաղաքացիական աշխատանք կատարող անձինք:

Այս առումով հարկ է նշել, որ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ հաշվեքննողը հաշվեքննություն, ստուգում իրականացնող հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողն է: Ուստի, գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությամբ ներկայացված խնդիրը չի լուծվի: Թերևս անհրաժեշտ է օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասը «քաղաքացիական ծառայողների» բառերից հետո լրացնել «փորձագետների և մասնագետների» բառերով՝ հաշվի առնելով օրենքի դրույթները:

Մասնավորապես, օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 14-րդ և 15-րդ կետերի հա-

մածայն՝ մասնագետը պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացում ներգրավվող՝ համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձն է, իսկ փորձագետը՝ պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացում ներգրավվող՝ հաշվեքննության և ստուգման վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձը:

10. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել, թե օրենքում կատարվող լրացումը նույն օրենքի 40-րդ հոդվածի կոնկրետ որ մասում է կատարվելու:

Բացի այդ, նախագծի 8-րդ հոդվածում ամրագրված կարգավորումն անհրաժեշտ է դիտարկել սույն առաջարկությունների 7-րդ կետով ներկայացված դիտողության համատեքստում:

11. Նախագծին կից ներկայացված հիմնավորման 3-րդ կետով նշվում է, որ նախագծի 2-4-րդ և 6-րդ հոդվածներում առաջարկվող կարգավորումները խմբագրական բնույթի են կամ իրականացվում են անհարկի կրկնություններից խուսափելու համար, մինչդեռ այս առումով հարկ ենք համարում նշել, որ նախագծի 3-րդ հոդվածով, օրինակ, առաջարկվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ արդյունքում նախատեսելով, որ Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքներով, ինչը, սակայն, ինքնին չի կարող հանդիսանալ խմբագրական բնույթի փոփոխություն:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը իր՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-1176 որոշմամբ անդրադառնալով օրենքների հիմնավորվածությանը, արձանագրել է. «(…) օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը կարևորել է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու դրանց կատարման օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված առաջարկությունների հիման վրա նախագիծը լրամշակման կարիք ունի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1211 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-052-28.09.2021-ՖՎ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.10.2021
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-052-28.09.2021-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 16-րդ կետով.

«16) **ընթացիկ եզրակացություն՝** սույն օրենքով սահմանված կարգով իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված եւ պալատի կողմից հաստատված փաստաթուղթ.»,

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17-րդ կետով.

«17) **հաշվեքննության արձանագրություն՝** սույն օրենքով սահմանված կարգով հաշվեքննողի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ կազմված եւ իր ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 9. Հաշվեքննիչ պալատի գործունեության օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքը*

1. Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքներով:»

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի գործողությունը դադարեցնել:

Հոդված 5. Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում «եզրակացությունները,» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց եւ ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները» բառերը:

Հոդված 6. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել:

Հոդված 7. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքացիական ծառայողների» բառերը փոխարինել «հաշվեքննողների» բառով:

Հոդված 8. Օրենքի 40-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել,

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1 մասով.

«1.1 Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց եւ ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները Ազգային ժողով է ներկայացնում սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում եւ կարգով:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի նախագծի ներկայացումը պայմանավորված է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքն (այսուհետ՝ Օրենք) ուժի մեջ մտնելուց եւ կիրարկվելուց հետո ի հայտ եկած որոշ նորմերի կարգավորման անհրաժեշտությամբ: Առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները կրում են ինչպես խմբագրական եւ կառուցվածքային բնույթ, այնպես էլ կարգավորումներ են առաջարկում Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության ընթացակարգերի եւ բովանդակության վերաբերյալ:

2. Պալատի գործունեության նպատակը, ինչպես ամրագրված է Օրենքում, հանրային ֆինանսների եւ սեփականության ոլորտում պետական եւ համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների եւ վարկերի, պետական եւ համայնքային սեփականության օգտագործման օրինականության եւ արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին եւ հանրությանը ժամանակին, մասնագիտական եւ անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է: Համաձայն օրենքի, նշյալ տեղեկատվությունը Ազգային ժողովին եւ հանրությանը տրամադրվում է հաշվեքննության արդյունքում կազմված եւ հաստատված ընթացիկ եզրակացությունների միջոցով, ուստի առաջարկվում է նախագծում լրացնել «ընթացիկ եզրակացություն» եւ դրա հետ փոխկապակցված «հաշվեքննության արձանագրություն» տերմինները:

3. Նախագծի 2-4-րդ, 6-րդ հոդվածներում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները խմբագրական բնույթի են կամ իրականացվում են անհարկի կրկնություններից խուսափելու համար: Մասնավորապես, Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 39-րդ հոդվածի 1-ին մասը կրկնվում են, ուստի անհարկի կրկնությունից խուսափելու համար առաջարկվում է 31-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել:

4. Հաշվեքննությանը քաղաքացիական ծառայողների հետ համատեղ, պալատի որոշմամբ կարող են մասնակցել նաեւ քաղաքացիական աշխատանք կատարող անձինք, որոնք եւս պետք է լիարժեք ներգրավված լինեն հաշվեքննության գործընթացին: Նախագծի 7-րդ հոդվածի կարգավորմամբ առաջարկվում է կատարել համապատասխան փոփոխություն, որը ներկայացվել է Հաշվեքննիչ պալատի կողմից:

5. 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է պետական բյուջեի երեք, վեց եւ ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններ հաստատելու եւ օգտագործելու մասին դրույթը, որի համաձայն հաշվեքննության արդյունքում կազմած ընթացիկ եզրակացությունները պալատը հաստատում է յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո չորս ամսվա ընթացքում եւ ներկայացնում Ազգային ժողովին: Բացի այդ, հաշվեքննությունների ընթացքում առանձին-առանձին կազմված ընթացիկ եզրակացությունները, որպես այդպիսք, դժվար է այլընտրանքային դիտարկել ՀՀ կառավարության կողմից եռամսյակային պարբերականությամբ ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվությանը եւ համատեղ քննարկել: Ուստի, առաջարկվում է պետական

բյուջեի երեք, վեց եւ ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների հետ մեկտեղ Ազգային ժողով ներկայացնել սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց եւ ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացություններ, որոնք իրենց մեջ կամփոփեն այդ հաշվեքննությունների ընթացքում կազմված ընթացիկ եզրակացությունները:

6. Նախագծով առաջարկվում է վերացնել պալատի այն պարտավորությունը, համաձայն որի յուրաքանչյուր եռամսյակի առաջին երեք աշխատանքային օրվա ընթացքում պալատը պետք է Ազգային ժողով ներկայացնի այդ եռամսյակի ընթացքում ըստ ամիսների բաշխված Ազգային ժողով ներկայացվելիք ընթացիկ եզրակացությունների նախատեսվող ցանկը: Այդ դրույթը ուժի մեջ մտնելուց ի վեր կիրառական նշանակություն չի ունեցել, քանի որ ընթացիկ եզրակացությունները քննարկող Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը պալատի կողմից ներկայացված ընթացիկ եզրակացությունները օրենքով սահմանված կարգով ուսումնասիրում է՝ դրանք փաստացի ստանալուն պես:

7. Նախագծի մշակման ընթացքում հաշվի են առնվել Հաշվեքննիչ պալատի, SIGMA Եվրոպական միության եւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD) համատեղ նախաձեռնության դիտարկումները, ինչպես նաեւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի փորձագետների կողմից իրականացված վերլուծության արդյունքները: